ԵԴ2/44276/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26-ը հունվարի 2024թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Լ. Սաղոյանս, ծանոթանալով «ՆԱԵՎ» ՍՊ ընկերության հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին,

ՊԱՐԶԵՑԻ

2023 թվականի դեկտեմբերի 22-ին Դատարան է մուտքագրվել «ՆԱԵՎ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արև Հարությունյանի հայցադիմումն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ թիվ ՀՀՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-23/35-Ք ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.12.2023թ. թիվ 3 արձանագրությունը մասնակի՝ ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ, 7-րդ, 8-րդ, 11-րդ, 13-րդ չափաբաժինների մասով չկայացած ճանաչելու և «ՆԱԵՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Նշված հայցադիմումի հիման վրա կազմված գործը մակագրվել է Դատարանի դատավոր Լ. Սաղոյանին 22.12.2023թ.-ին, իսկ դատավորի աշխատակազմին հանձնվել՝ 26.12.2023թ.-ին:

Դատարանի 2023 թվականի դեկտեմբերի 29-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է՝ թերությունները շտկելու և հայցադիմումը կրկին ներկայանելու համար եռօրյա ժամկետի տրամադրմամբ:

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը ստանալուց հետո եռօրյա ժամկետի պահպանմամբ՝ 2024 թվականի հունվարի 22-ին, կրկին հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ թիվ ՀՀՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-23/35-Ք ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.12.2023թ. թիվ 3 արձանագրությունը մասնակի՝ «ՆԱԵՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 21.12.2023թ թիվ 26/1-Գ որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Կրկին նրկայացված հայցադիմումը նույն օրը մակագրվել է դատարանի դատավոր Լ. Սաղոյանին, իսկ նախագահող դատավորի աշխատակազմին է հանձնվել՝ 23.01.2024 թվականին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐ ԼԻԼԻԹ ՍԱՂՈՅԱՆ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Քննության առնելով ներկայացված հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ կրկին ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«ՆԱԵՎ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ թիվ ՀՀՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-23/35-Ք ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.12.2023թ. թիվ 3 արձանագրությունը մասնակի՝ «ՆԱԵՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 21.12.2023թ թիվ 26/1-Գ որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ընդունել վարույթ և համարել դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը:

Եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 2024 թվականին մարտի 11-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Լ. ՍԱՂՈՅԱՆ**

ԼԱՐԻՍԱ ՍԱՂՈՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ